**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

04.12.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ա. Պետրոսյան,
ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան:

**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (ՀԲՄ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Կարկոմավտո» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագիրը առկա են: «Կարկոմավտո» ՍՊԸ-ն ներկայացրել է պարզաբանում, համաձայն որի տեխնիկական բնութագրում նշված դռների բացվածքը ոչ թե 1800 է, այլ 180 աստիճան: Հաշվի առնելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց մասնակցից շտկում չպահանջել, քանի որ ներկայացված պարզաբանմամբ անհամապատասխանությունն արդեն իսկ շտկվել է: Ուստի մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 04.12.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Կարկոմավտո» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Տ. Մաթևոսյան |
| Գնահատող | Ս. Պետրոսյան |
| Գնահատող | Դ. Սերոբյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Ամիրյան |